Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

9 մարտի 2017 թվականի N 10

---

6. ՊԱՐՏԱԴԻՐ ՍՊԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՄՈՐԹԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ պարտադիր սպանդանոցային մորթի կիրառման ոլորտներին և ժամանակացույցին՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. մարտի 10
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
մարտի 9-ի նիստի N 10
արձանագրային որոշման

ՊԱՐՏԱԴԻՐ ՍՊԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՄՈՐԹԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N	Ոլորտային դասակարգումը	Կատարման ժամկետը
1	Պետական գնումներով սպանդանոցային ծագման մսի ձեռքբերում	2017 թվականի մայիսի 1-ից
2	Մսամթերքի արտադրություն (տեղական սպանդանոցային ծագման միս օգտագործելու դեպքում)	2017 թվականի նոյեմբերի 1-ից
3	Տեղական արտադրության սպանդանոցային ծագման մսի արտահանում	2017 թվականի նոյեմբերի 1-ից
4	Երևան քաղաքի հանրային սննդի կազմակերպման օբյեկտներում (տեղական սպանդանոցային ծագման միս օգտագործելու դեպքում)	2018 թվականի ապրիլի 1-ից
5	Երևան քաղաքի տեղական սպանդանոցային ծագման մսի առևտրի իրականացման վայրերում	2018 թվականի մարտի 1-ից
6	ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի մարզերի տեղական սպանդանոցային ծագման մսի առևտրի իրականացման վայրերում	2018 թվականի հունիսի 1-ից
7	ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի մարզերի հանրային սննդի կազմակերպման օբյեկտներում (տեղական սպանդանոցային ծագման միս օգտագործելու դեպքում)	2018 թվականի հուլիսի 1-ից